# «ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ»
## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**« 15 » հունվարի 2025թ.**

**№ 01/0001.2026**

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Համբարձում Մաթևոսյանին

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

«ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրում (Կենտրոնական տեղամաս) իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահամում՝ համաձայն N29/056 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին համաձայն՝ աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Արտադրական հրապարակի տարածքի մոնիտորինգ՝ օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով,
2. Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
3. Լցակույտում պահպանվող ապարների մոնիթորինգ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,
4. Հանքի հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,
5. Աղմուկի մակարդակի մոնիթորինգ՝ աշխատանքային գործընթացի ժամանակ:

Վերոգրյալի հիման վրա, ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի 59-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն, «ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերությունը սույն թվականի հունվարի 15-ին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն է ուղարկել Ընկերության կողմից 2025 թվականին Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) շահագործման ընթացքում կատարված բնապահպանական մշտադիտարկման արդյունքների տարեկան հաշվետվության էլեկտրոնային տարբերակը:

Ներկայումս, սույն գրությամբ Ձեզ եմ տրամադրում հիշյալ հաշվետվության թղթային տարբերակը:

**Առդիր՝ 11 թերթ:**

Հարգանքով՝
«ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
տնօրեն՝ Տիգրան Վարդանյան

«ԼԵՅՄԱՆՍ ՄԱՅՆԻՆԳ» «ЛЕЙМАНС МАЙНИНГ» «LEYMANS MINING» 03523417

Իրավաբանական հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Վերին Արտաշատ 0735, Պողոսյան փող. Տուն 3
Գործունեության հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Կապուտան, Ջրաբերի խճուղի 1
Էլ. Հասցե՝ leymans.mining@mail.ru, հեռ.՝ +374 93 13-07-15